

րաբերությունների զարգացման հարցերին արդի փուլում, մասնավորապես ՍՄԿԿ XXVI համագումարի որոշումների լույսի տակ:

«Ազգային հարցի լուծման սովետական փորձի միջազգային նշանակությունը» թեման էր ֆենարկվում կոնֆերանսի երկրորդ բաժանմունքի նիստերում: Այստեղ կարգազվեցին 14 զեկուցումներ:

Գրոֆ. Ա. Նեյֆելցի և պատմ. դիտ. քեկեաժու Լ. Նեբեդիենկո (Մոսկվա) զեկուցումներում ցույց էր տրված, որ ՍՄԶՄ կազմավորումը, բազմազգ սոցիալիստական պետության վաթսուն տարիների գոյության փաստը իր հեղափոխական ազդեցությունն ունի համաշխարհային ազգային-ազատագրական շարժումների վրա: Այդ շարժումները մինչև իրենց որոշակի սահմանները հանդիսանում են միջազգային բանվորական շարժման բաղկացուցիչ մասը: Այս տեսանկյունից էլ նշվեց, որ սովետական պատմաբանները պետք է մեծ ուշադրություն դարձնեն Հոկտեմբերյան հեղափոխության ընթացքում ու նրա նախօրյակին միաստանի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների պատմության ուսումնասիրությանը, առանձնացնեն զբաղմանը ընդհանուր օրինաչափություններն ու ազգային առանձնահատկությունները: Ցանկություն հայտնվեց հեղափոխական շարժումների մեջ ընդհանուրի և ազգայինի պրոբլեմներին նվիրել նստուկ գիտական նստաշրջան:

Սոցիալիստական երկրների մի շարք գիտնականների՝ Գ. Միչև, Յ. Նիկոլով (Բուլղարիա), Լ. Քյովլագո (Հունգարիա), Ա. Գաբսի, Ռ. Միրոնչուկ (Կուրա), Նացագորո (ՄԺՇ), Յու. Կոթիժեկ (ՉՍՍՀ) զեկուցումներում ցույց տրվեցին ազգային հարցի լուծման ուղիները իրենց երկրներում՝ սովետական փորձի օգտագործմամբ: Այդ երկրներից ամեն մեկի պատմական անցյալը, տեղական առանձնահատկությունները, ազգային հարցի լուծման հրատապության աստիճանի կո-

մունիստական և բանվորական կուսակցությանը ներքին թելադրել են ազգային ֆաղափակեությունյան իրականացման համար ձեռնարկել առանձին միջոցառումներ: Այդ բարդ նաևապարհին եղել են նաև սխալներ ու սայլաբուսումներ:

Սոցիալիստական սիստեմի ծննդյան հետ առաջացել են ազգամիջյան և միջպետական հարաբերություններ՝ հիմնված պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների իրավահավասարության սկզբունքների վրա: Սոցիալիստական ինտեգրացիայի տեսանկյունից այս հարցերը ֆենարկվեցին պրոֆ. Մ. Առուստամյանի զեկուցման մեջ: Իսկ պատմական գիտ. դեկտորներ Լ. Ջակի (Մոսկվա), Կ. Խուզավերդյանի և պրոֆ. Լ. Խուրշուդյանի զեկուցումները նրվիրված էին ՍՄԶՄ ժողովուրդների մշակութային և ազգային-պետական շինարարության հարցերին, ինչպես նաև վեց տասնամյակների ընթացքում նրանց ձեռք բերած նվաճումների միջազգային նշանակությանը:

Ջեկուցումների մեծ մասում ուշադրություն դարձվեց այն նաևգամաՆէի վրա, որ ժամանակակից պայմաններում պետք է ուժեղացնել զաղափարական պայմար բուրժուական կեղծարարների դեմ, այդ պայմարը ազգային հարցում պետք է կրի ակտիվ ու հարձակողական բնույթ, բացահայտի ազգային հարցի լուծման լեներյան ծրագրի ու ֆաղափակեության նշմարտացիությունը, որպեսզի աշխարհի բոլոր երկրներում նիշտ բմբունեն ՍՄԶՄ-ի կազմավորման սկրբունեները:

Գեկտեմբերի 2-ին ամփոփվեցին կարդացված զեկուցումները. բաժանմունքների նախագահներ պրոֆ. պրոֆ. Մ. Կուլիչենկոն, Մ. Առաֆեյյանը, Ե. Գորոդեցկին և Կ. Խուզավերդյանը նշեցին զեկուցումների գիտական արժեքն ու հրատապությունը:

Վ. ՄԱՂԱՅԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՆՍԱՇՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՍՍԶՄ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻՆ

Իրևանի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի և ասպիրանտների գիտական նստաշրջանի լիագումար նիստը տեղի ունեցավ դեկտեմբերի 4-ին, համալսարանի մեծ հանդիսասրահում: Բացելով նստաշրջանը՝ համալսարանի ռեկտոր, ՉՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Ս. Համբարձումյանն ասաց. Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմավորումը Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո խոշորագույն իրադարձություն էր: Այն մի հոր դարաշրջան նշանավո-

րեց մարդկության զարգացման պատմության մեջ, որը բացառեց ամեն տեսակի ազգային խտրականություն ու շահագործում: Առաջին անգամ ստեղծվեց տարբեր ազգերի ու ազգությունների համերաշխ կամավոր միություն, որը դարձավ խաղաղության ու սոցիալական առաջադիմության դրոշակակիրը ողջ աշխարհում: Եվ այսօր մեր ազատ հանրապետությունների 60-ամյա Միությունը դարձել է զարգացած սոցիալիստական հասարակության առաջավոր ուժը: ՍՄԶՄ-ի կազմավորումը անսահմանափակ նեա-

բավորություններ բնձնեց ոչ միայն ցարական Ռուսաստանի տիրապետության տակ եղած հետամնաց ազգերի ու ազգությունների տնտեսական վերելքի համար, այլև մեծապես նպաստեց Ռուսաց գիտության ու մշակույթի զարգացմանը: Եվ պատահական չէ, որ այսօր Սովետական Միության գիտությունը շատ բնագավառներում առաջ է անցել ամենազարգացած Երկրների գիտությունից: Գիտության դերը անշակ կարևոր է ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար: Իսկ գիտության զարգացման համար անվիճելի է բարձրագույն դպրոցի դերը: Մեր բուններում են զարգանում գիտության շատ ճյուղեր, որոնք հետագայում արմատավորվում են ժողովրդական տնտեսության մեջ: Բուհերի մեջ էլ գիտության զարգացման առաջատար դերը իրենց վրա են վերցրել համալսարանները: Այս տեսակետից մեր հանրապետության գիտության ու մշակույթի տարբեր ճյուղերի զարգացման ասպարեզում մեծ դեր է խաղացել Երկրների պետական համալսարանը: Իր հիմնադրման առաջին տարիներից սկսած այստեղ կատարվել են լայն ծավալի գիտահետազոտական աշխատանքներ, գիտական ու բարեկամական կապեր են ստեղծվել Միության ու արտասահմանյան ևս առաջատար համալսարանների հետ, որոնք զենալով ընդլայնվել ու ավելի մեծ ծավալներ են ստացել: Այսօր Երևանի համալսարանում կատարվում են գիտահետազոտական լուրջ աշխատանքներ, որոնք արդյունքներ հայտնի են Միության մեջ ու արտասահմանում: Այդ հետազոտությունները վերաբերում են ինչպես հայագիտության ու հայրենագիտության, հասարակական ու հումանիտար գիտությունների բնագավառներին, այնպես էլ բնագիտության ու տեխնիկայի, ֆիզիկայի ու մաթեմատիկայի, մեխանիկայի ու կենսաբանության, բիոլոգիայի ու երկրաբանության տարբեր պարբյակներին: Մեր համալսարանը այդ խնդիրները հանախ լուծում է հանրապետության ու Միության, հանախ էլ արտասահմանյան գիտական օջախների հետ համատեղ, որը տալիս է լավ արդյունքներ: Առաջիկայում ևս մենք պետք է զարգացնենք մեր գիտական համագործակցությունը տարբեր բուհերի ու գիտական կենտրոնների հետ և ժողտնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող հիմնահարցերը լուծենք միասին:

Պենեար նիստում «ՄՍՀՄ-ի կազմավորումը և նոր տիպի ազգային ճարտարությունների ձևավորումը» զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Մ. Մելիքյանը:

Մեծ Հոկտեմբերի հաղթանակով, սաաց նա, երբմեի ցարական Ռուսաստանում և նրա ծայրամասերում բնակվող բոլոր ազգերն ու ազգությունները ստացան ազատության ու հավասարության իրավունք: Կարճ ժամանակ անց՝ 1922 թ. դեկտեմբերի 30-ին, Վ. Ի. Լենինի անմիջա-

կան նախաձեռնությամբ ստեղծվեց Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը: ՄՍՀՄ կազմավորումով հաստատվեցին նոր տիպի ճարտարություններ՝ փոխադարձ օգնության և համագործակցության սկզբունքով: Ազգերի կամավոր միավորումը ապահովեց նրանց համար զարգացման բարձր մակարդակ, հնարավորություն տվեց լուծելու ազգային և համազգային շատ խնդիրներ: ՄՍՀՄ-ի ստեղծումը Վ. Ի. Լենինի զաղափարների, ազգային ֆազականության սկզբունքների կենդանի մարմնացումն է:

Կիզգումար նիստում զեկուցումներով հանդես եկան նաև ՄՍՀ ԳԱ ակադ. Գ. Սահակյանը («Ֆիզիկայի զարգացումը Երևանի պետական համալսարանում»), ՄՍՀ ԳԱ բոլորակից անդամ Հ. Բակլավայանը («Լեոն Օրբելին և վեգետատիվ նյարդային համակարգի ֆունկցիաների վերաբերյալ ժամանակակից պատկերացումը»):

Հորեյանական գիտական նստաշրջանը շարունակվեց ֆակուլտետային 28 բաժանմունքներում, ուր կարգավեցին շուրջ 300 զեկուցումներ: Երկա հաղորդումը նվիրված է հայոց լեզվի, հայագիտական հետազոտությունների պարբյակին լաբորատորիայի, իրավաբանական, արևելագիտական, մանկավարժության, հոգեբանության և հայ գրականության բաժանմունքներում կարողացած զեկուցումներին:

Հայոց լեզվի բաժանմունք: Պրոֆ. Ա. Սուքիասյանը փաստական հարուստ նյութի հիման վրա ցույց տվեց սովետական իշխանության տարիներին հասարակական-ֆազական կյանքի արմատական փոփոխությունների հետևանքով ժամանակակից հայոց լեզվի բառային կազմում կատարված տեղաշարժերը: Այդ շրջանում բառապաշարային փոփոխությունները վերաբերում են ինչպես լեզվի համագործածական, այնպես էլ մասնագիտական-տեխնիկական բառապաշարների համարյա բոլոր բնագավառներին: Նրշված պատճառներով որոշակի փոփոխությունների է ենթարկվել նաև իմաստարանական համակարգը: Այդ շրջանում նշանակալից են ուսերենից և ուսերենի միջոցով ժամանակակից հայերենում կատարվող բառային փոփոխությունները:

«Հայերենում եղած աճագական փոխառությունների հարցը» զեկուցումով հանդես եկավ պրոֆ. Ռ. Իշխանյանը: Հայերենում եղած փոխառյալ բառերի տարբեր շերտերը, սաաց նա, հայոց պատմության տարբեր շրջանների վերաբերյալ վկայություններ են տալիս: Աճագական փոխառությունների խնդրում կարևոր է այն, թե այդ փոխառությունները անմիջապես աճագերենից են անցել հայերենին, թե՞ որևէ միջնորդ լեզվից: Միջագետքը հարավից կից է Հայկական լեռնաշխարհին, իսկ աճագերենը Միջագետքում

խոսվել է մինչև մ. թ. ա. 7-րդ դարը. արդ, Լքե աֆֆաղեռենից հայերենին անմիջականորեն անցած բառեր կան, կնշանակի մինչև մ. թ. ա. 7-րդ դարը հայերը բնակվել են Հայկական լեռնաշխարհում: Միջագետքի ավելի հին բնակիչներ են եղել շումերները: Շումերները Միջագետքում խոսվել է մինչև մ. թ. ա. 2-րդ հազարամյակի սկիզբը: Կնշանակի՝ Լքե հայերենում կան անմիջապես շումերերենից անցած բառեր, հայերը մ. թ. ա. 3-րդ հազարամյակում գտնվել են Հայկական լեռնաշխարհում:

Աֆֆաղական բառեր հայերենում եղել են Հ. Հյուրմանը, Հ. Անադյանը, Կարսը, Ն. Աղոնցը, Գ. Ղափանցյանը, Ն. Մկրտչյանը: Գ. Ջահուկյանը ի մի բերելով այդ ուղղությամբ կատարված աշխատանքը նշեց մոտ 80 բառ, որոնք աֆֆաղական ծագում ունեն: Նա նաև այն կարծիքը հայտնեց, որ աֆֆաղական բառերը հայերենին անցել են և՛ անմիջապես աֆֆաղերենից, և՛ միջնորդ լեզվի օգնությամբ: Ի. Գյակոնովը, որ ամեն գնով ջանում է պաշտպանել հայերի եկվորության մասին իր տեսակետը, փորձում է նախ ժխտել աֆֆաղերենից հայերենին անմիջականորեն անցած որևէ բառի առկայությունը, ապա՝ առնասարակ հայերենում աֆֆաղական փոխառություն համարվող գրեթե բոլոր բառերը: Սակայն նրա ժխտումներից և ոչ մեկը համոզիչ չէ. օրինակ, աֆֆաղերենից հայերենին անցած *փակ* բառը նա մերժում է որպես աֆֆաղական փոխառություն՝ պնդելով, որ այդ բառը աֆֆաղերենում նշանակել է կողպեք, իսկ հայերենում այդ իմաստը Լքեի էլ ունեցել: Այնինչ հայտնի է, որ *փակ* բն՝ հին, բն՝ նոր հայերենում նշանակել է և՛ փակ լինելը, և՛ կողպեք: Փակ բառի աֆֆաղական ծագումն ակնհայտ է: Այսպիսիք են և՛ Գյակոնովի մյուս «ժխտումները»:

Աֆֆաղական այնպիսի բառերի անմիջական փոխառություն լինելը, ինչպիսիք են՝ *կնիք, շոր, փակ, ցից, խոց, խոր (Տոր)* և այլն, հիմնավոր պետք է համարել: Ավելին, վերջում նշեց Ռ. Խյանյանը, հայերենում կան բառեր, որոնք շումերերենից կատարված անմիջական փոխառություններ են. դրանցից էլ, օրինակ, *ագարակ* բառը, որը նույն իմաստով կա շումերերենում՝ *agar* ձևով: Հայերենի հին և նոր հարևան լեզուներում (աֆֆաղերեն, իրանյան, խուրերեն և այլն) այն չկա, որ լրիվ հիմք է տալիս *ագարակը* շումերական անմիջական փոխառություն համարելու (չլիարիկ *արտ* բառի ծագման հետ, որ հնդեվրոպական նախալեզվից է գալիս, իսկ հրեղեվրոպական նախալեզուն այն *agro* ձևով վերցրել է շումերերենից): Այսպիսով, եզրակացրեց գեկուցողը վերջում, հայերենում կան շումերական և աֆֆաղական անմիջական փոխառություններ, որոնք վկայում են հայերի առկայությունն այս լեռնաշխարհում մ. թ. ա. 3-րդ հազարամյակում:

Պրոֆ. Մ. Ասատրյանի գեկուցումը նվիրված էր հայերեն բացատրական բառարանների վերականգնական նշումների սկզբունքներին: Հայ բերականական գրականության մեջ այս հարցը վրիպել է լեզվաբանների ուշադրությունից, սակայն նա: Այս խնդիրը հանգում է նրան, թե այդ բառարաններում ինչ չափով պետք է արտացոլվի լեզվի վերականգնությունը: Չեկուցողը արտահայտեց այն միտքը, որ բացատրական բառարաններում վերջիվերջ պետք է արտացոլվեն տվյալ լեզվի ընդհանուր համակարգից շեղվող, այսպես կոչված, անկանոն վերականգնական ձևերը: Իսկ ինչ վերաբերում է վերականգնական ընդհանուր հարացույցներին, որոնք կանոնավոր շարժերով կազմում են նույնատիպ ձևեր, ապա դրանք բացատրական բառարանում, որպես կանոն, չպետք է արտացոլվեն:

Ք. Սուքիասյանի «Հայերենի ռուսերենից կատարված բառային և իմաստային փոխառությունների ուսումնասիրությունների պատմությունից» գեկուցումը տպագրված է մեր հանդեսի սույն համարում:

Հայագիտական հետազոտությունների պրոբլեմային լարորատորիայի ավագ գիտաշխատող Ա. Մաղոյանը կարդաց «Միջնադարյան կենսագրական պոեմը (13—16-րդ դդ.)» գեկուցումը: Նա նշեց, որ պայմանական այդ անունով մեկտեղված են այն բոլոր պոեմները, որոնք նվիրված են որևէ իրական անձնավորության, անկախ նրանից, տվյալ ստեղծագործության մեջ հերոսի ամբողջ կենսագրությունն է արտացոլված, թե նրա կյանքի մեկ-երկու դրվագ միայն: Գրանք գլխավորապես սրբախոսական երկեր են՝ վարեեր. վկայաբանություններ: Եթե վարքի հերոս կարող էր լինել որևէ բանով այժի բեկած խոշոր անճատը (նշանավոր պատմական դեմք, պետական-ֆառաֆական կամ մշակութային գործիչ), ապա վկայաբանության հերոսը՝ գեղջուկ թե արհեստավոր, գուսան թե եկաբիչ, նահատակն է, որ իրեն գոհում է հանուն զաղափարի: Առաջինների մեջ հայերենասիրական սկիզբը բողոքական է խնամքով կամ մասնակիորեն է արտահայտվում: Մինչդեռ վերջինը շեղում է հայրենասիրությամբ: Երկու դեպքում էլ հեղինակների նպատակը նույնն է. ստեղծել օրինակելի, իդեալական մարդու կերպար, որ դաստիարակչական նշանակություն պիտի ունենա: Այնուհետև գեկուցողը սահմանեց պոեմի՝ իրեն զբաղեցնող ենթատեսակը, ցույց տվեց դրա ժանրային բովանդակության ու ձևի փոխհարաբերությունը, կառուցվածքի առանձնահատկությունները:

«Հայաստանի տեղսնունների բառարանի» կազմման սկզբունքներին մասին հրապարակումով հանդես եկավ նրա հեղինակներից մեկը՝ պրոֆ. Բ. Հակոբյանը: Բազմախառու այդ բառարանն ունի էյուրիկ լայն ընդգրկում, ասաց գեկուցողը: Այստեղ ամփոփված են աշխարհագրական, պատ-

մական, բանասիրական, հեղափոխական, ազգագրական և այլ կարգի բազմաթիվ ու բազմապիսի տեղեկություններ, որոնք առնչվել են տվյալ տեղանվան հետ: Ժամանակագրական տեսակետից բառարանն ընդգրկում է հնագույն դարերից մինչև մեր օրերը հիշատակվող տեղանունները: Նրա ընդգրկման տարածքը հասնում է մոտ 400 հազար բառակուսի կիրմնաթղթի՝ իր մեջ առնելով պատմական Հայաստանի՝ հարևան մի քանի երկրներով ու շրջաններով: Բառարանի բոլոր տեղանունների բանակը՝ ներառյալ և տարբերակները, հասնում է շուրջ 120 հազարի: Յուրաքանչյուր հատուրում գետեղված են 30—35 բառեր և 300—500 լուսանկարներ: Բառարանի առաջին հատուրի տպագրությունը ընթացքի մեջ է, մյուս հատուրները պատրաստվում են հրատարակման:

«Սայաթ-Նովայի վրացերեն խաղերը «Վրաց գրականության պատմության» մեջ» գեկուցման մեջ Հր. Բայրամյանը, անդրադառնալով միջնադարի վրաց պոեզիայի ընդհանուր կացությանը, նշեց, որ այն կրում էր պարսկական և թուրքական պոեզիայի խոր ազդեցությունը: Առավել վաղ էր աշուղական-գուսանական երգարվեստի վիճակը. քանզի այն գուտ թուրքալեզու էր: Սայաթ-Նովան առաջինն էր, որ թուրքալեզու ճոռումախոսություն-մեծարանք աշուղաբանությունը դարձրեց լիարժեք ազգային-վրացական, վրացալեզու, աշուղական արվեստը՝ ժողովրդական իր սկզբունքներով ու բովանդակությամբ: Նա գրեց կենդանի-խոսակցական լեզվով: Մեծ է քանաստղծի ազդեցությունը իր ժամանակի և հետագա շրջանի վրաց գրողների վրա. հատկապես XVIII դարի երկրորդ կեսի և XIX դարի վրաց բանաստեղծներից շատերը (Քեսիկի, Ալ. Ճավնազյան, Գր. Օրբելիանի) գրում էին Սայաթ-Նովայի ստղաշափությամբ ու հանգերով, գրում էին մուստաբառներ, դափիաններ, թեղիսներ. որոնցում ակնհայտ են Սայաթ-Նովայի երգերի սրամաղորությունը, խոճն ու ապրումը, բառազանճն ու պոետիկան: Սայաթ-Նովան ուրույն և մշտական տեղ է գրապահեցնում վրաց գրականության պատմության մեջ:

Ավագ ինժեներ Հովհ. Օհանյանը «Շամիրամի հնավայրի հեյլենիստական ժամանակաշրջանի բնակավայրի պեղումները 1981—1982 թթ.» գեկուցման մեջ նշեց, որ Շամիրամ բնակավայրը, հավանաբար, մ. թ. ա. I հազարամյակի վերջերին քաղաքական վերելք ապրող Հայաստանի տնտեսության զարգացման արտահայտություններից մեկն է. քանզի որ գտածոների տեսակավորումը (թանիքներ, ճենճեններ, աղորիքներ, ծայռերի մեջ փորված գոբեր, խոճանոցային խնցեղեն և այլն) բոլոր էր տալիս ենթադրելու Շամիրամի զարգացած երկրագործական և անասնապահական բնակավայր լինելը: Բացառված չէ նրա նմանությունը գրավոր աղբ-

յուրներում հիշատակված ազարակներին կամ ձեռակերտ դաստակերտներին:

Իրավաբանական ֆակուլտետի նստաշրջանին ֆակուլտետի դասախոսներից բացի մասնակցում էին նաև ՀՍՄՀ ԳԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի իրավունքի բաժնի գիտաշխատողները:

Դոց. Մ. Խաչատրյանը «Անդրֆեդերացիայի ստեղծումը կարևոր փուլ էր ՍՍՀՄ կազմավորման ճանապարհին» գեկուցման մեջ նշելով Անդրբլդկվասում սովետական կարգերի հաստատման բախտուրդը նշանակությունը հայ, վրացի և ադրբեջանցի ժողովուրդների կյանքում. ընդգրծեց Անդրֆեդերացիայի ստեղծման պատմական անհրաժեշտությունը: Ձևկուցողը նշեց, որ Անդրֆեդերացիայի մեջ միավորվելը սկզբում կրեկ էր ռազմական օգնության բնույթ: Սակայն կյանքն ապացուցեց, որ սոցիալիստական պետությունների միավորման հարմար ձևը ֆեդերացիան է. ՍՍՀՄ-ի ստեղծումը դրա ամենավաղ ապացույցն էր:

Դոց. Վ. Նազարյանի գեկուցման թեման էր «ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների իրավասությունը բառ ՍՍՀՄ 1977 թ. սահմանադրության»: Խոսելով պետությունների իրավասության հարցի մասին, գեկուցողը նշեց, որ այն սովորաբար ծագում է ֆեդերատիվ պետություններում: Եվ քանզի որ ՍՍՀՄ-ը ֆեդերատիվ սոցիալիստական պետություն է, ուստի երկրի հիմնական օրենքը՝ ՍՍՀՄ սահմանադրությունը, հստակորեն սահմանազատել է ՍՍՀ Միության, միութենական և ինքնավար հանրապետությունների իրավասությունները զարգացած սոցիալիզմի պայմաններում: ՍՍՀՄ 1977 թ. սահմանադրությունն էլ ավելի է ընդլայնել միութենական հանրապետությունների իրավասությունը: Դրա վաղ ապացույցը համապետական հարցերի լուծմանը միութենական հանրապետությունների մասնակցության շրջանակներին համամաստ ընդլայնումն է: Շատ օրինաչափ է, վերջում նշեց գեկուցողը, որ այսօր էլ ՍՍՀՄ-ի ստեղծման օրինակն ընկած է զարգացող շատ երկրների պետական գործունեության հիմքում:

ՍՄԿԿ XXVI համագումարը մեկ անգամ ևս նշեց սովետական օրենսդրության ճյուղերի կողմնափակման կարևորությունը. — իր գեկուցման մեջ ասաց դոց. Ա. Հայրամյանը, Համադատակի տալով վարչաիրավական օրենսդրության կողմնափակման պատմությունը՝ նա նշեց ՍՍՀ Միության և միութենական հանրապետությունների վարչական իրավախախտումների համար պատասխանատվության հիմունքների դերը միութենական հանրապետությունների վարչական իրավախախտումների մասին օրենսգրքերի ըստ ստեղծման գործում: Ներկայումս Հայկական ՍՍՀ վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի ստեղծումը կապված է լուրջ զժվարություն-

ների հետ, քանի որ այն պետք է իր մեջ արտացոլի բազմաթիվ օրենսդրական և ենթօրենսդրական ակտերի բովանդակությունը: Նման օրենսգրքի ընդունումը կօգնի նաև մասնագիտական տեղիները մշակելու գործին: Այդ օրենսգրքի նախագծի մշակմանը մասնակցում են իրավաբանական ֆակուլտետի պետական իրավունքի, սովետական շինարարության և միջազգային իրավունքի ամբիոնները:

Իրավ. գիտ. դոկտոր Ա. Բեգլանը խոսեց այն հսկայական դերի մասին, որ կատարում է ՍՄԿԿ-ն սովետական ժողովրդի բարեկեցության բարձրացման գործում: Հատկապես նա կանգ առավ սովետական ժողովրդի բարեկեցության բարձրացման իրավական ապահովման հարցերի լուսաբանման, մասնավորապես՝ պրոբլեմի սահմանադրական հիմքերի վրա:

Ռ. Ավագյանը «ՍՄԿԿ XXVI համագումարը և շրջակա միջավայրի պահպանության ուժեղացումը» գեկուցման մեջ նշեց, որ համագումարի կողմից առաջ քաշված էկոլոգիական խնդիրների իրականացման գործում պատասխանատու դեր ունեն ժողովրդական դեպուտատների սովետները, որոնք, ՍՄԶՄ սահմանադրության համապատասխան, ունեն լայն իրավունքներ: Չեկուցողը հատուկ ուշադրություն դարձրեց բնության պահպանության, մասնավորապես ջրային ռեսուրսների և օդի պահպանության հարցերին:

Պրոֆ. Շ. Պետրոսյանը նշեց Վ. Ի. Անիբեի անգնահատելի դերը ՍՄԶՄ-ի կազմավորման գործում, ինչպես նաև ՍՄԶՄ-ի մեջ միավորվող հանրապետությունների կողմից 1922 թ. դեկտեմբերի 30-ին ստորագրված պայմանագրի ու դեկլարացիայի նշանակությունը՝ ՍՄԶՄ 1924 թ. սահմանադրության ստեղծման գործում:

Հետախոնարար լավեցի նաև Վ. Ստեփանյանի «ՍՄԿԿ XXVI համագումարը և սոցիալիստական իրավաստեղծության գիտական հիմնավորվածության ուժեղացումը», Ս. Աղասարյանի «Անհատի պատվի և արժանապատվության պաշտպանությունը սովետական աշխատանքային իրավունքում», պրոֆ. Ա. Քոմյասյանի «Հայկական ՍՄՀ ֆրեզիան օրենսդրության կազմավորման պատմական պրոցեսը», դոց. Հ. Պիվազյանի «Հայկական ՍՄՀ ֆրեզիան դատավարական օրենսգրքի կատարելագործման մի քանի հարցեր», դոց. Մ. Քոմյասյանի «Իրատարանակազմության մասին օրենսդրության ստեղծման և զարգացման հիմնական փուլերը» գեկուցումները:

Արևելագիտության բաժանմունք: Պատմ. գիտ. դոկտոր Ա. Տեր-Ղևոնդյանը «Հայաստանի տրեսեական վիճակի արաբական տիրապետության շրջանում» գեկուցման մեջ նշեց, որ հարցի մասին գոյություն ունի երկակի կարծիք. նախ, որ արաբական տիրապետության շրջանում Հայաստանի տեսնաբանությունը խիստ անկում է ապրել

(Հ. Մանսնդյան), և հակառակը՝ այդ դարաշրջանում Հայաստանում զարգացել են ապրանքադրամային հարաբերությունները (Հ. Չորյան): Բանն այն է, ասաց Չեկուցողը, որ իրոք եղել է տնտեսական անկում, սակայն այդ ժամանակաշրջանի որոշ հատվածում նկատվում է արտադրության որոշ աշխուժացում: Առևտուր հիմնականում անկում է ապրել, սակայն 9-րդ դ. առաջին կեսում արհեստները բարձր վիճակում են եղել, մանավանդ որ այդ կեսդարյա շրջանում Հայաստանը ներքին ինքնավարություն է ունեցել: Բարձր վիճակում են եղել տնային կահավորանքի (գորգեր, բարձեր, վարադույրներ և այլն), ինչպես նաև գործվածքների արտադրությունը, խեցեգործությունն ու ապակեգործությունը:

Խ. Ամիրյանի գեկուցումը նվիրված էր բուրժուերներում հայտնեցի փոխառյալ 94 բառերի ստուգաբանությանը: Չեկուցողը բուրժուական ժամանակակից գրականությունից դուրս է գրել հայերենից փոխառյալ 225 բառեր, որոնք այժմ էլ կարելի է հանդիպել մասնավորապես Արևմտյան Հայաստանի, Կիլիկիայի և Կենտրոնական Քուրդիայի շրջաններում ապրողների բանավոր խոսքում: Արդի բուրժու գրողների գեղարվեստական ստեղծագործություններում և բանահյուսական աշխատանքներում հանախակի գործածություն ունեն հայերենից փոխառյալ տասնյակ բառեր: Չեկուցողը հայտնեց նաև, որ այդ 225 բառերից 94-ը արդեն տեղ են գտել բուրժուական բառարանների մեջ՝ որպես գրական փոխառություններ:

Պատմ. գիտ. դոկտոր Շ. Մհոյանը կարդաց գեկուցում «Ազգային ինքնավարության իրականացման հնարավորությունները զարգացող երկրներում (Իրաքի հանրապետության օրինակով)» թեմայով: Ազգային հարցի բարդ և խնդրված վիճակի արմատները Մերձավոր և Միջին Արևելքում, ասաց նա, սկիզբ են առնում արաբ-մուսուլմանական էթնոպոլիտիկայից և բուրժուազերական արշավանքներից, որոնք էապես խախտեցին այս գոտու էթնոկոնական տարբերակաբողջությունների բնական զարգացումը: Չարգացող երկրներում իմպերիալիզմը, ի թիվս բազում այլ դժվար լուծելի խնդիրների, բողոք է նաև ազգային հարցը: Այդ երկրներում ազգային դեմոկրատական իրավունքների համար պայքարող ուժերը իրենց նպատակներին հասնելու խնդիրը սերտորեն առնելու են ընդհանուր դեմոկրատական շարժման հաջողության հետ:

Պրոֆ. Հ. Փափազյանը Մատենադարանի արխիվային բաժնի «Կաթողիկոսական դիվանի» ֆոնդիում պեմվող 16-18-րդ դդ. մուսուլմանական կրոնական բարձրագույն ատյանների կողմից տրված վճիռների (ֆիքիվաներ և միսալներ) հիման վրա վերլուծեց այդ պաշտոնական վավերագրերը՝ որպես Սեֆյան Իրանի իրավունքի պատմության ուսումնասիրության ճավատի

սկզբնաղբյուրներ: Դրանք միաբերան վկայում են հոգևոր և աշխարհիկ դատական բարձրագույն օրգանների՝ Շար՝ի և Ուրֆի համատեղ համաձայնեցված գործունեության մասին, միաժամանակ հաստատելով հոգևոր ատյանների առաջնայնությունը: Մեծ մասամբ հայ համայնքների իրավական վիճակին վերաբերող շահական հրովարտակներով հաստատված ֆիքվաների ու միսայների աղբյուրագիտական ուսումնասիրությունը բույլ է տալիս եզրակացնելու, որ քաղաքացիական կամ Ուրֆի ատյաններն առանց իրավական բարձրագույն շահաբական մարմինների մասնակցության չլին կարող որևէ իրավական հարցի վերաբերյալ վճիռ կայացնել:

Ռ. Կորխմաղյանն անդրադարձավ ականավոր հումանիստ Իոհանես Լեփսիուսի գործունեության որոշ կողմերին: Իր ողջ գիտակցական կյանքը Լեփսիուսը նվիրել է Օսմանյան կայսրության մեջ հայերի ցեղասպանության դեմ մղված պայքարին: Նա առաջիններից էր, որ աշխարհին հայտնի դարձրեց բուրժուական ռեակցիոն կառավարող շրջանների պետական ջարդարանական քաղաքականության անավոր փաստերը և հետևողականորեն մարտնչեց բնաջնջող հայերի պաշտպանության դիրքերում, բնդհուպ Ինչչև նորաստեղծ Սովետական Հայաստանին օգնության կազմակերպումը: Պատմագիտական գրականության և արխիվային նյութերի հիման վրա զեկուցողը բնճարկեց Լեփսիուսի հայանրպաստ գործունեության հիմնական փուլերը, վերլուծեց նրա պայքարի ձևերն ու եղանակները կայսերական Գերմանիայում տիրող իրավիճակի, գերմանական կառավարության, եկեղեցական շրջանների և առանձին քաղաքական գործիչների՝ Լեփսիուսի հանդեպ ունեցած վերաբերմունքի ֆոնի վրա:

Պրոֆ. Գ. Նալբանդյանը ստուգաբանեց իրանական ազգային էպոսի հերոսների «զոհակ», «Նաստուր» և «չամֆիդ» անունները: *Զ. Գաղուրյանի* զեկուցումը նվիրված էր նորավեպի ժանրի զարգացմանը ժամանակակից իրախյան գրականության մեջ:

Մանկավարժության բաժանմունք: *Դրոց. Ա. Իգնատյանը* «Կ. Ուլինսկին ՍՍՀՄ ժողովուրդների մանկավարժական մեթի զեաճատմամբ» զեկուցման մեջ նկատեց, որ ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում հայերն առաջիններից են, որ բարձր են զեաճատել ռուս մանկավարժու-

թյան նահապետի զաղափարները և տարածել են Անդրկովկասում: Այնուհետև նա ցույց տվեց այն կարևոր դերը, որ խաղացել են Խ. Ստեփանեն, Ն. Տեր-Առնդյանը, Ս. Պալասանյանը, Ղ. Ազատյանը և ուրիշներ Կ. Գ. Ուլինսկու զաղափարները օրյեկտիվորեն զեաճատելու և հայ իրականության մեջ տարածելու գործում:

Պրոֆ. Թ. Ջուրբանյանը նաեղես էկավ «Հայոց լեզվի և զրականության ուսուցման ուղղեքացը 60 տարում» զեկուցումով, զոց. *Լ. Ալեքսանյանը* զեկուցեց Սովետական Հայաստանում տարրական կրթության կատարելագործման ու զարգացման հեռանկարների մասին, իսկ զոց. *Փ. Հուրիխանյանի* զեկուցումը նվիրված էր ՀՍՍՀ բարձրագույն զարոցի անցած 60-ամյա ուղուն:

Հոգեբանության բաժանմունքի նիստում զոց. *Է. Գրիլը* «Արտադրական աշխատանքային գործունեության նկատմամբ երիտասարդ բանվորի աղապտացիայի մի քանի հարցեր» զեկուցման մեջ խոսեց աղապտացիայի մեխանիզմների և արտադրական գործունեության մեջ երիտասարդ բանվորի արտադրական կոլեկտիվին հարմարվելու պրոցեսի մասին:

Սոցիալիստական ապրելակերպում նոր ավանդույթների ու ծեսերի արմատավորման հոգեբանական պրոբլեմների յուսաբանման էր նվիրված *Է. Հարթրյանի* զեկուցումը:

Դրոց. Օ. Ղուրբանյանը զեկուցեց երեխայի անձնային որակների ձևավորման վրա ծնողների փոխազդեցության, ծնողների և երեխաների փոխհարաբերության մասին:

Ա. Սեդրակյանը իր կատարած հետազոտությունների հիման վրա հոգեբանական վերլուծության ենթարկեց բանվորական ընտանիքներում հոգեբանական մթնոլորտի, բանվորական մասնագիտությունների հարողափոխությունը անցիվալ-հոգեբանական պրոբլեմները:

Ս. Ամիրյանի զեկուցումը նվիրված էր կրթության զարոցականների հիշողության և խոսքային նյութի դիմիկ կառուցվածքի փոխհարաբերությունների յուսաբանմանը:

Ս. Ազիզյանը հետաքրքիր համեմատական վերլուծություն անցկացրեց նեոլիթի մարդու ստեղծագործական գործունեության և ժամանակակից երեխայի մտածողության միջև:

Հայ գրականության բաժանմունքն իր աշխատանքը սկսեց պրոֆ. *Վ. Գաբրիելյանի* «Սովետական գրականության ինտերկացիոնալ բնույ-

քը» զեկուցումով (այն տպագրված է մեր հան-
դեսի սույն համարում) :

«Երկու գիրք Հայաստանի մասին» զեկուց-
ման մեջ համառոտակի անդրադառնալով Հա-
յաստան եկած ռուս գրողների ու մշակութային
գործիչների ակնհայտներին, էսսեներին, ուղեգր-
ություններին ու զեղարվեստական պատումնե-
րին, դոց. 4. Աղաթնկյանը հատկապես կանգ ա-
ռավ Վ. Գրոսմանի «Քարին ընդ ձեզ, հայեր» և
Ա. Քիտովի «Հայաստանի դասերը» գրքերի վրա:
Այդ գրքերի ճեղհնակները, ասաց նա, չեն բա-
վարարվել միայն արտաֆին տպավորություննե-
րով, խորացել են մեր ժողովրդի կեցության, ու-
զու և էության մեջ: Ազգիվ բարեկամի շիտակ հա-
յացնով են նայել մեր ժողովրդի ողբերգական
անցյալին ու հերոսական ներկային: Այդ գրքերը
տաղչեն հերթին նպաստում են մեր՝ հայերիս
իճճանանաշմանը, քանի որ նրանց ճեղհնակնե-
րը իրոք ճայտնաբերել են մեր երկրի ու ժողո-
վրդի համար բնորոշ այնպիսի հատկանիշներ,
որոնք աննկատ էին մնացել կամ հանիրավի ան-
տեսվել էին: Հայաստանին նվիրված ռուս գրող-
ների ստեղծագործություններում առկա է Սովե-
տական Հայաստանի կենսագրությունը, ՅՕ-ամյա
ճանապարհն ու նվաճումները:

Դոց. Գր. Սարգսյանը անդրադարձավ Ալ.
Մյասնիկյանի և Ե. Չարենցի բարեկամությանը:
Պետական ֆաղափական գործունեությանը զու-
գահեռ Ալ. Մյասնիկյանը ուշադրությամբ էր
հետևում նոր ձևավորվող սովետահայ գրակա-
նության ընթացքին: Նա առաջիններից էր, որ
նկատեց Ե. Չարենցի վիթխարի կարողություն-

ները. առաջնակարգ դեր վերագրելով նրան ծա-
վաված գրական շարժման մեջ: 2. Սուրխարյա-
նի հայտնի նամակից հետո Ալ. Մյասնիկյանը
կազմակերպում է Ե. Չարենցի արտասահմանյան
ուղևորությունը: Արտասահմանից Մյասնիկյանին
գրած նամակում դարաշրջանի մեծ բանաստեղծը
անկեղծ խոստովանություն է անում իր և սերուն-
դակիցների սխալների մասին, նրա հետ խորհր-
դակցում սովետական արվեստի բնույթի, գա-
զացման ուղիների և հեռանկարների մասին:
Մյասնիկյանի եղբրական մահից հետո Չարենցը
նրա հիշատակին է ձուներկ «Կոմունարների պատր
Փարիզում» պոեմը և ուրիշ սրտառուչ ստեղծա-
գործություններ, բնութագրելով նրան որպես «խ-
նիկյան հրով ճառագած նախրյան արև»:

Ուշագրավ զեկուցումներով հանդես եկան նաև
դոց. Մ. Զանգուլադյանը, («Հայ դասական պոե-
զիայի ռուսերեն թարգմանությունները սովետա-
կան տարիներին»), Ա. Ավագյանը («Արևմտա-
հայության ռուսական կողմնորոշման հարցը Խ.
Դաշտենցի վեպերում»), Ռ. Գավթյանը («Գ. Դե-
միրեյանը ռուս գրականության և մշակույթի մա-
սին»), Վ. Գյուրբուդադյանը («Գրական զուգա-
հեռը Ա. Տերտերյանի աշխատություններում»):

ՍՍՀՄ կազմավորման հոբելյանական մեծ
տարեիցին նվիրված գիտական նստաշրջանը
Երևանի համալսարանում վերջին տարում կա-
տարված գիտահետազոտական աշխատանքների
արդյունքներն ի մի բերող կարևոր միջոցառում
էր, որ անցավ գիտական պատշաճ մակարդակով:

Լ. ԱՎԵՏԻՍՅԱՆ, Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ,
Գ. ՂԱՐԱՆՆՅԱՆ